Նար-Դոս

Սպանված աղավնին

Արարված որկրորդ

Հյուրասենյակ Բաղիրյանի տանը հնամաշ կահավորանքով: Դիմացը դուռ և երկու լուսամուտ, որոնք նայում են դեպի պատշգամբը: Աջ կողմը մի դուռ, որ տանում է դեպ հարևան սենյակը: Ձախ կողմը բազմոց ձեռակար բարձիկներով, երկու բազկաթոռ, կլոր սեղան, սեղանի վրա լամպ և կազմած մի գիրք: Բազմոցի գլխին հայելի: Հայելիներ նաև երկու հանդիպակաց պատերին սեղանակերպ պատվանդաններով, որոնց վրա դրված են երկ-երկու բրոնզյա շամադաններ: Ուր հարկն է՝ աթոռներ: Հատակին հնամաշ գորգ: Երեկո: Սեղանի լամպը վառված է: Դիմացի դռնից մտնում են Սիսակյանը և Մարգարյանը: Սիսակյանի ձեռքին կա թղթի մեջ փաթաթված բոնբոնիեր:

ՏԵՍԻԼ I

ՍԻՍԱԿՅԱՆ. Վերարկուդ հանիր և դիր այստեղ: (Վերարկուները հանում են և գլխարկների հետ միասին դնում աթոռների վրա): Եկ նստիր այստեղ: (Նստում են բազկաթոռների վրա):

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Լավ փեսացու և խաչեղբայր ենք եղել, ընդունում են անկոչ հյուրերի պես: (Ծիծաղում է կամաց): Երևի չես հայտնել, որ պիտի գանք:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ինչպես չէ: Առավոտյան այստեղ էի, ասացի, որ գալու ենք: Այս վառած լամպը ցույց է տալիս, որ ձեզ սպասում են եղել:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Հիմա իմացա՞ն, որ եկել ենք:

ՍԻՍԱԿՅԱՆ. Կենողի երեխան գնաց իմաց տալու: (Որոնում է գրպանները): Ապարանջանն ի՞նչ արի... Հա՛: (Վեր է կենում, վերարկուի գրպանից հանում թղթի մեջ փաթաթած ապարանջանի տուփը, դնում անդրավարտիքի գրպանը և նորից նստում):

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Որ վերցրել է գիրքը և թերթում է): Այս նա՞ է կարդում:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այդ ի՞նչ գիրք է:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ժյուլ Սիմոն «Работница в Европе»:

ՍԻՍԱԿՅԱՆ. Երևի:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ի՞նչ ես կարծում, այս գիրքը մոռացմամբ է մնացել, թե դիտմամբ է դրել այստեղ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ինչո՞ւ պետք է դիտմամբ դներ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Որպեսզի ցույց տա, թե՝ տեսե՛ք ինչպիսի գրքեր եմ կարդում, ռոմաններ չեմ կարդում:

ՍԻՍԱԿՅԱՆ. Չգիտեմ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Գիրքը դնում է տեղը): Ես մի բան մոռացա քեզ հարցնեմ. քանի՞ տարեկան կլինի:

ՍԻՍԱԿՅԱՆ. Մեծ է, կարծեմ, բավական մեծ է երևում արտաքինով: Եթե քսանհինգ չլինի, քսաներկու տարեկան անպատճառ կլինի: Պինդ-պինդ որ նայում է, ավելի մեծ է երևում: Բայց գիտե՞ս, նա որ այդպես պինդ-պինդ նայում է ինձ, ես չեմ նայում նրան:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ինչո՞ւ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Չեմ կարողանում: Նրա նայվածքի մեջ մի բան կա, որ ակամա ճնշում է: Ես առհասարակ նրան նայում եմ այն ժամանակ, երբ նա ինձ չի նայում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Լսիր, Գարեգին: Եկ ուղղակի խոստովանիր, որ թեև նշանվել ես և երեկ գիշեր էլ մեծ հիացմունքով էիր խոսում նրա մասին, բայց վախենում ես նրանից: Չէ՞:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Շփոթվելով): Ի՞նչպես թե վախենում...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Վախենում, էլի՛, ուղղակի վախենում: Եվ այդ է պատճառը, որ նրա պինդ-պինդ նայելիս չես կարողանում նայել նրան:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո՛, մի տեսակ ճնշվում եմ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Եվ դարձյալ դրա համար է, որ նա ավելի մեծ է երևում քեզ, մանավանդ պինդ-պինդ նայելիս:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Եվ այդ ժամանակ դու էլ փոքր ես երևում քո աչքին: Այդպես չէ՞:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ճիշտ է:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ուրեմն դու զգում ես, որ նա բարոյապես մեծ է, այսինքն բարձր է քեզնից: Չէ՞:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ի՞նչպես թե բարոյապես:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Այսինքն յուր ներքին ուժով կամքով, բնավորությամբ, խելքով:

ՍԻՍԱԿՅԱՆ. Երեկ խո ինքս ասացի քեզ, որ նա շատ խելոք աղջիկ է:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Այսինքն զգում ես, որ խելոք աղջիկ է, որովհետև չէ՞ որ նրա խելքը դեռ չես չափել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո, զգում եմ: Նա շարունակ լռում է ինձ մոտ: Երեկ էլ, այս առավոտ էլ գրեթե չի խոսել ինձ հետ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Հանկարծ նոր միտք է հղանում): Բա... Մեր տղա, կարող է հակառակը լինել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այսի՞նքն:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Կարող է նա տգետ ու հիմարի մեկը լինել, ինչպես սովորաբար մեր մարդու տալու չխոսկան աղջիկներն են լինում: Դու խո գիտես, որ չեն խոսում կամ շատ խելոքությունից, կամ շատ հիմարությունից:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ոչ, սխալվում ես. լռողները միշտ խելոք են լինում: Մինչև անգամ այն հիմարը, որ լռում է, խելոք է, կնշանակի՝ նա այնքան խելք ունի, որ հասկանում է, թե ինքը հիմար է և, լռելով, չի ուզում ցույց տալ, որ հիմար է: Այո, չխոսողը միշտ խելոք է:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Ծիծաղելով): Ուրեմն, քո լոգիկայով, ես ու դու, որ խոսում ենք, հիմար ենք, և անասունները, որ չեն խոսում, խելոք են մարդկանցից:

ՍԻՍԱԿՅԱՆ. Անշո՛ւշտ: Իհարկե, անասունները խելոք են մարդկանցից: Թվիր մարդկային ո՛ր հիմարությունն ուզում ես և տես՝ անասունները գործո՞ւմ են այդ հիմարություններից գեթ մեկը: Շատերից մի պարզ օրինակ: Ծխախոտ ծխելը հիմարություն է, չէ՞: Դե ասա տեսնեմ՝ ո՞ր անասունն է ծխախոտ ծխում: Մի ուրիշ օրինակ: Ահա՛, երեք հարյուր ռուբլի փող եմ տվել և ապարանջան եմ բերել հարսնացուիս ընծա: Ասա տեսնեմ՝ այն ո՞ր անասունն է, որ ապարանջան է ընծայում յուր էգին:

Մարգարյանը սաստիկ ծիծաղում է: Հարևան սենյակից լսվում է նախ մի քչփչոց, հետո կանացի մի անզուսպ ծղրտոց, որն իսկույն էլ լռում է: Մարգարյանը դադարում է ծիծաղելուց: Սիսակյանը վեր է կենում անհանգստացած և ականջը լարում դեպի հարևան սենյակի դուռը: Մարգարյանը զարմացած նայում է նրա դեմքին: Լռություն:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Սա ի՞նչ բան էր:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Կամաց): Այս նրա ձայնն էր, կարծեմ (Միջոց): Երևի մոր հետ էր: Գիտե՞ս, երեկ երեկո էլ, այս առավոտ էլ նկատեցի, որ մայր ու աղջիկ չունեն իրար հետ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Հիմա կռվո՞ւմ էին:

ՍԻՍԱԿՅԱՆ. Չգիտեմ... երևի...

Աջ դռնից մտնում է Սոֆիան: Նրա դեմքին երևամ են զսպված վրդովմունքի նշաններ:

ՏԵՍԻԼ II

ՍՈՖԻԱ. Ներողություն, պարոններ, ես այս րոպեին եկա. քրոջս երեխան հանկարծ վատ էր դառել, կանչել էին: Բարև ձեզ:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Ներկայացնելով Մարգարյանին). Այս իմ բարեկամն է, մեր խաչեղբայրը:

ՍՈՖԻԱ. Շատ ուրախ եմ: (Մեղմում է Մարգարյանի ձեռքը): Համեցեք նստեք: (Ամենքը նստում են): Շա՞տ ժամանակ է շնորհ եք բերել:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ոչ, շատ ժամանակ չէ, որ եկել ենք:

ՍՈՖԻԱ. Հավատացեք, ես այնպես նեղանում եմ, որ առաջին անգամ շնորհ եք բերում, և ես...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Վնաս չունի, տիկին, ինչ կա որ... Հիմա ի՞նչպես է երեխան:

ՍՈՖԻԱ. Հիմա, փառք աստծո, լավ է: Բժիշկն եկավ և ասաց, որ ոչինչ չկա: Գիտեք, երեխան հանկարծ վայր է ընկել և ուշաթափվել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ո՞րտեղ է Սառան:

ՍՈՖԻԱ. Սառան... (շփոթվում է): Իսկույն կգա... նա էլ այսօր մի փոքր հալ չունի:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Անհանգստացած): Հիվա՞նդ է:

ՍՈՖԻԱ. Չէ, այնպես... Մի վախենաք, ոչինչ չկա... Մի փոքր գլուխը ցավում էր...

ՍԻՍԱԿՅԱՆ. Իսկ պարոն Հակո՞բը:

ՍՈՖԻԱ. Նա դեռ չի եկել: Շաբաթ երեկոները նա մի փոքր ուշ է վերջացնում գործը: Բայց երևի շուտով կգա:

Մտնում է Սառան աջ դռնից ջղային արագ քայլվածքով և մտնելիս դեպի մեջքն է ձգում ուսին ընկած հաստ գիսակը: Սիսակյանը և Մարգարյանը վեր են կենում:

ՏԵՍԻԼ III

ՍԻՍԱԿՅԱՆ. (Ընդառաջելով Սառային): Բարի երեկո: (Սառան լուռ տալիս է նրան յուր ձեռքը և նայում Մարգարյանին): Այս իմ բարեկամն է, մեր խաչեղբայրը:

Սառան լուռ սեղմում է Մարգարյանի ձեռքը, պինդ-պինդ նայելով նրա աչքերին: Սոֆիան վեր է կենում դուրս գնում աջ դռնից, Սառան երկար և անհաշտ հայացքով ճանապարհ է դնում նրան:

ՍԻՍԱԿՅԱՆ. Դու հիվա՞նդ էիր:

ՍԱՌԱ. (Խստորեն, ըստ երևույթին, նրան դուր չեկավ եզակի դիմումը): Ո՛չ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Հապա մայրիկն ասաց, որ դու...

ՍԱՌԱ. Նա սուտ է ասել: Խնդրեմ նստեցեք: (Նստում են: Անհարմար լռություն):

ՍԻՍԱԿՅԱՆ. (Հանկարծ հիշելով, գրպանից հանում է ապարանջանի տուփը, բաց անում և դնում է Սառայի առաջ): Այս մեր խաչեղբոր ընծան է: (Նայում է Մարգարյանին և հիմարաբար ծիծաղում):

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Անհամ դրության մեջ զգալով իրեն այն համառ հայացքից, որ Սառան հառել էր նրա դեմքին): Բարեկամս կատակ է անում, օրիորդ, այդ ինքն է ընծա բերել ձեզ համար:

ՍԻՍԱԿՅԱՆ. Լավ. ապարանջանը որ ես եմ բերել, բաս ա՞յս ով է բերել: (Շտապով վեր է կենում, աթոռի վրայից վերցնում է շաքարեղենի բոնբոնիերը, փաթեթը դեն շպրտում և դնում Սառայի առաջ): Այս խո դո՞ւ ես բերել: (Ծիծաղում է):

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Տարակուսանքով թոթվում է ուսերը): Չհավատաք, օրիորդ, այդ էլ ինքն է բերել, բայց այնքան բարի է, որ յուր նվերներն ուզում է ինձ վերագրել:

Սառան ուշադրություն չի դարձնում նվերներին և զարմացած նայում է մերթ Սիսակյանին, մերթ Մարգարյանին: Անհարմար լռություն:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Մի բան ասած լինելու համար): Այս գիրքը դո՞ւք եք կարդում, օրիորդ:

ՍԱՌԱ. Ոչ:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Ուրախ, որ խոսելու և խոսեցնելու առիթ ունի): Հապա ինչո՞ւ էր այստեղ դրված:

ՍԱՌԱ. Մի ընկերուհի ունեմ, նա էր տարել կարդալու, այս երեկո վերադարձրեց:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ուրեմն քոնն է:

ՍԱՌԱ. Այո:

ՍԻՍԱԿՅԱՆ. Իսկ դու կարդացե՞լ ես:

ՍԱՌԱ. (Վեր է թռչում զսպված զայրույթի հանկարծական բռնկումով): Ներեցեք, տվեք այդ գիրքը պահեմ: (Գրեթե խլում է Մարգարյանի ձեռքից

գիրքը, տանում շպրտում է հայելու պատվանդանի վրա և նորից գալիս նստում է յուր տեղը: Ճնշող լռություն):

ՍԻՍԱԿՅԱՆ. (Սիրտը խիստ կոտրած, անհամարձակորեն): Դու վիրավորվեցի՞ր:

ՍԱՌԱ (Սառան խստությամբ): Ես չեմ սիրում երբ ինձ հարցաքննում են:

ՍԻՍԱԿՅԱՆ. Հետո ես քեզ ե՞րբ հարցաքննեցի:

ՍԱՌԱ. Դուք այս րոպեիս հարցրիք՝ կարդացե՞լ եմ ես այն գիրքը: Ինչո՞ւ չպետք է կարդացած լինեի:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Շփոթված): Ես... ներողություն... Ես չէի կարծում... Ես հարցրի այնպես... Եթե գիտենայի... Դու իզուր...

ՍԱՌԱ. Խնդրեմ ինձ հետ դու-ով չխոսել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ես... ներողություն... Ես... (Լռում է բոլորովին շփոթված):

Երկարատև, խիստ ճնշող լռություն: Մտնում է Բաղիրյանը աջ դռնից:

ՏԵՍԻԼ IV

ԲԱՂԻՐՅԱՆ. Բարի երեկո ձեզ: Այնպես սուս ու փուս նստել եք, որ կարծես մարդ չկա այստեղ: (Ծանոթանալով Մարգարյանի հետ): Պարոն Մարգարյա՞ն, եթե չեմ սխալվում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Պատիվ ունեմ:

ԲԱՂԻՐՅԱՆ. Դեռ չտեսած՝ ես արդեն ճանաչում էի ձեզ, որովհետև ձեր բարեկամը շարունակ ձեր մասին էր խոսում: Այժմ շատ ուրախ եմ, որ անձամբ ծանոթանում եմ ձեզ հետ: Նստեցեք խնդրեմ: (Մարգարյանը նստում է): Ինձ կներեք, որ մի քիչ ուշացա: (Սիսակյանին): Հը՛մ, փեսա՞, դու ինչպես ես: Իրիկունը մենակ-մենակ լավ քեֆ արինք, չէ՞: Բաս ասում էիր, թե միտք չունես ամուսնանալու, հիմա լավ ես եկե՞լ: (Ծիծաղում է և մտերմորեն խփում նրա

ուսին): Նստիր, ինչո՞ւ ես եկել: (Նստում են): Օհո՛, ընծա ես բերել: (Պենսնեն դնում է քթին և վերցնում ապարանջանը: Սառան վեր է կենում և դիմում դեպի մյուս սենյակը): Կաց, Սառա, ո՞ւր ես գնում:

Սառան ուշադրություն չի դարձնում և դուրս է գնում:

ՏԵՍԻԼ V

ԲԱՂԻՐՅԱՆ. (Դիտելով ապարանջանը): Հիանալի՜ բան է, հիանալի՜... Մեկ ակներին նայեցեք (ցույց է տալիս Մարգարյանին): Կարծես աստղեր են վառվում: Սրան տված կլինես, փեսա... ասեմ ինչքան... երկու հարյուր կամ մինչև... երկու հարյուր հիսուն:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ճիշտ երեք հարյուր է տվել:

ԲԱՂԻՐՅԱՆ. Արժե, թանկ չէ: Տեսնո՞ւմ եք այս մեծ ակը, մեջտեղում, սա թանկագին բան է: Հիանալի է, հիանալի: (Ապարանջանը դնում է տուփի մեջ և բաց է անում բոնբոնիերը): Այս էլ ուրիշ նվեր: (Պենսնեն հանում է քթից և մտերմորեն խփում Սիսակյանի ուսին): Ինչպես երևում է, բարեկամ, դու այնքան էլ միամիտ չես եղել, ինչպես ես էի կարծում: (Լավ դիտելով նրա դեմքը), բայց ի՞նչ է պատահել. քեզ նեղացրե՞լ են:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Լացակումած): Ոչ... ես նեղացրի:

ԲԱՂԻՐՅԱՆ. (Զարմացած): Ո՞ւմ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Օրիորդին:

ԲԱՂԻՐՅԱՆ. Ինչպե՞ս:

ՍԻՍԱԿՅԱՆ. Նա բարկացավ ինձ վրա:

ԲԱՂԻՐՅԱՆ. Ինչո՞ւ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Չգիտեմ... Կարծեց թե ես ուզում եմ հարցաքննել իրեն, մինչդեռ ես հարցաքննելու ամենևին միտք չեմ ունեցել: Ես ներողություն խնդրեցի... չներեց...

և... (քիչ է մնում, որ լաց լինի):

ԲԱՂԻՐՅԱՆ. Ա՞յդ միայն:

ՍԻՍԱԿՅԱՆ. Հետո... նեղացավ, որ իր հետ դու-ով եմ խոսում...

ԲԱՂԻՐՅԱՆ. (Ծիծաղում է. հետո ձեռքը մտերմորեն դնելով նրա ուսին՝ կես կատակով, կես լրջությամբ): Բան չկա, սիրելիս, բան չկտ: Այդպիսի դատարկ բաներին որ ուշադրություն դարձնենք, հա՛, ո՞ւր կերթա: Դուք դեռ չեք ճանաչում իրար: Երեկ մեկ, այսօր երկու: Քանի գնաք, այնքան կճանաչեք, կհասկանաք և կսիրեք իրար: Այս էլ ասեմ, որ սկզբում կռվելը շատ լավ նշան է. այդ նշանակում է, որ վերջը հոգի չեք խնայի իրար համար: Ճիշտ է, նա շատ քմահաճ, կամակոր և հպարտ աղջիկ է, բայց և այնքան բարի է, որ քո բարությունը նրա մոտ զերո: Քմահաճ է, շատ անգամ կոպիտ, երբեմն ուղղակի կռվարար, տեսնո՞ւմ ես, ես նրա բոլոր պակասություններն ասում եմ, բայց այդ բոլորն արտաքուստ, իսկ սիրտն աղավնու սիրտ է: (Մարգարյանին): Անցյալ օրը երեսիս այնպիսի կոպիտ խոսքեր ասաց, որ իմ տեղը դուք լինեիք նրա հայրը, դուրս կանեիք տանից: Պահանջեցի, որ ներողություն խնդրի: Չխնդրեց և ավելի մեծ կոպտություններ արեց: Հետևյալ օրը, երբ ես այդ բանը մոռացել էի, մտավ ինձ մոտ և ասաց... ի՞նչ եք կարծում, ի՞նչ ասի, որ հավանեք: «Ինչո՞ւ ինձ չծեծեցիր», ասաց: Զարմացա: Ի՞նչի համար, ասում եմ: «Նրա համար, ասում է, որ երեկ քեզ վիրավորեցի»: (Սիսակյանին). Ահա թե ինչպիսի աղջիկ է նա: Այ, շուտով, աստված տա, կպսակվեք, կապրեք միասին և կտեսնես՝ ճի՞շտ եմ ասում, թե ոչ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ախր ընծայիս էլ ուշադրություն չդարձրեց:

ԲԱՂԻՐՅԱՆ. Այս հրաշալի ապարանջանի՞ն:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո:

ԲԱՂԻՐՅԱՆ. Օ՛, անհոգ եղիր, անկարելի, անհնարին բան է, որ ուշադրություն դարձրած չլինի: Կին չէ՞: Աչքի տակով նայած կլինի: Բայց այնքան հպարտ, որ այդ ցույց չէր տալ: Պետք է իմանաս, որ նա շատ խելոք աղջիկ էլ է, շատ գրքեր է կարդացել, օ՛, շա՛տ: Ա՛յ, այդ կողմից կարող ես վախենալ նրանից: (Ծիծաղում

է):

Մտնում է Սոֆիան:

ՏԵՍԻԼ VI

ԲԱՂԻՐՅԱՆ. Սոֆիա, դու տեսե՞լ ես մեր փեսայի բերած ընծան:

ՍՈՖԻԱ. (Նստում է): Ի՞նչ ընծա:

ԲԱՂԻՐՅԱՆ. Վա՛հ, դեռ չես տեսե՞լ: Մեկ նայիր, է՛: (Ապարանջանը տալիս է նրան):

ՍՈՖԻԱ. (Դիտելով): Այս ի՛նչ հրաշալի բան է...

ԲԱՂԻՐՅԱՆ. Մեկ լավ նայիր ակներին... մեջտեղի մեծը տես... չորս բոլորքինը...

ՍՈՖԻԱ. Հրաշալի՛ բան է... Ի՞նչ եք տվել, փեսա:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Քաջալերված): Երեք հարյուր ռուբլի:

ՍՈՖԻԱ. Մի՛թե... Շա՛ա, շա՛տ հրաշալի բան է:

ԲԱՂԻՐՅԱՆ. (Մտերմորեն գրկելով Սիսակյանին): Բաս որ ասում էի լավ փեսացու եմ ճարել... (ծիծաղում է):

Սառան մատուցարանով թեյ է բերում, հոնքերը կիտած, առանց ոչ ոքի նայելու, բաժանում է բաժակները:

ՏԵՍԻԼ VII

ԲԱՂԻՐՅԱՆ. Լսիր, ինչո՞ւ ես բարկացրել փեսացուիդ: (Սառան չի պատասխանում և մատուցարանը ձեռքին, կանգնած է հոր առաջ, սպասելով, որ նա վերցնի յուր բաժակը): Ինձ նայիր: Չե՞ս լսում: Տես ինչ սիրուն բան է բերել քեզ համար: (Վերցնում է ապարանջանը և ծիծաղելով կամաց խփում նրա կզակին: Սառան մատուցարանը պահում է մի ձեռքով, մյուսով վերցնում վերջին

բաժակը դնում հոր առաջ և զսպված կատաղությամբ դիմում է դեպի աջ դուռը): Դե՛, դա արդեն բանի նման չէ: Դու մեզ բոլորովին խաղք ու խայտառակ ես անում:

ՍԱՌԱ. Որպեսզի ձեզ խաղք ու խայտառակ չանեմ, մի՛ խոսեք ինձ հետ այնպես, ինչպես երեխայի հետ են խոսում: (Դուրս է գնում մատուցարանը ձեռքին և դուռը պինդ շրխկացնում յուր ետևից: Սոֆիան, սաստիկ ամոթահար, վեր է կենում շտապով և հետևում նրան):

ՏԵՍԻԼ VIII

ԲԱՂԻՐՅԱՆ. (Մարգարյանին ժպտալով): Տեսա՞ք, նոր կոպտություն: (Միսակյանին): Տեսնո՞ւմ ես, սիրելիս, ինձ հետ էլ է այդպես վարվում: Բայց հավատացնում եմ քեզ, այդ խոսքերն են միայն, որ կան, իսկ սիրտն աղավնու սիրտ է: Ինչպես երևում է, այսօր վատ տրամադրության մեջ է. այդ բանը երբեմն պատահում է նրան: Սպասիր, ես նրան կհաշտեցնեմ քեզ հետ: Դու սիրտդ մի կոտրիր: (Վեր է կենում և շտապով դուրս գնում աջ դռնից):

ՏԵՍԻԼ IX

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Նստած է ապշած: Երկարատև լռությունից հետո): Գարեգի՞ն... Սա ի՞նչ է... Այդ աղջիկն աննորմալ դրության մեջ է՞, թե՞ մեզ ոչնչի տեղ չի դնում... Եվ դու դրան ես հավանում... Եվ դու դրա՞ ամուսինը պիտի դառնաս.. Ի՞նչ ես պապանձվել. խոսիր է՛:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Սաստիկ ընկճված): Ի՞նչ խոսեմ...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Մեծ կասկածամտությամբ գլուխը շարժելով): Չէ, բարեկամ, չէ՛... վեր կաց, վեր կաց գնանք: (Վեր է կենում):

ՍԻՍԱԿՅԱՆ. (Զարմացած): Ո՞ւր:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ի՞նչպես թե ուր: Մի՞թե այս բոլորից հետո դու դեռևս միտք ունես նրա հետ ամուսնանալու:

ՍԻՍԱԿՅԱՆ. Հապա ի՞նչ անեմ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ի՞նչպես թե ինչ անես: Նա միայն բառերով չասաց, թե վեր կացեք կորեք այստեղից, և դու դեռ հարցնում ես. թե ինչ անե՞ս: (Միջոց, որի ժամանակ Մարգարյանը նայում է Սիսակյանին գրեթե ապշած, Սիսակյանը նստած է մտամոլոր): Մի՞թե հիրավի դու սիրում ես նրան:

ՍԻՍԱԿՅԱՆ. Սիրում եմ նրան...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ա՛յ, զարմանալի մարդ... բայց մի՞թե չես տեսնում, որ նա քեզ չի հավանում: Եվ ոչ թե միայն քեզ չի հավանում, այլև տեսնել անգամ չէ ուզում քեզ:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Բուռ համառությամբ): Ի՞նչ անեմ: Ես սիրում եմ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Ջսպելով զայրույթը, մտերմորեն): Լսիր, Գարեգին, ինչ եմ ասում: Նա եթե աննորմալ դրության մեջ չէ, ապա չափազանց կամակոր, կոպիտ և, որ գլխավորն է, չարահոգի աղջիկ է, այնքան չարահոգի, որ ամենևին չի կարողանում զսպել իրեն գոնե լոկ քաղաքավարության համար: Մինչդեռ նա անկիրթ չէ, հիմար էլ չէ երևում, նրա դեմքը ինտելիգենտ դեմք է: Հա՛, գեղեցիկ է, խոսք չունեմ, մինչև անգամ շատ գեղեցիկ. բայց ի՞նչ դուրս եկավ դրանից: Ես պարզ կերպով տեսնում եմ, որ այդ աղջիկն յուր անտանելի բնավորությամբ մի պատիժ է այս տան մեջ, և նրա ծնողները աշխատում են ռադ անել գլխներից: Նրա խորամանկ հայրն իր սիրապատիր խոսքերով պարզապես խաբել է քեզ և յուր ծուղակն է գցել: Ի՞նչ ես նայում այդ ծեր աղվեսի ասածներին. Սառան նույնքան աղավնու սիրտ ունի, որքան դու գայլի սիրտ: Նա քո ամբողջ կյանքը կթունավորի:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ես նրան առիթ չեմ տալ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Հիմա առիթ տվեցի՞ր, որ այս ֆորտելները սարքեց գլխիդ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Նա կարծեց թե ուզում եմ հարցաքննել իրեն: Ես այսուհետև զգույշ կլինեմ, այդպիսի բաներ կարծելու առիթ չեմ տալ: Հետո՝ դու-ով էի խոսում նրա հետ: Այսուհետև դուք-ով կխոսեմ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Սրտանց): Փո՛ւ. իդիստ...

ՍԻՍԱԿՅԱՆ. (Վիրավորված): Խնդրե՞մ... ես իդիստ չեմ...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Դու ոչ միայն իդիստ ես, այլև, կարելի է ասել, իդիստների թագավորը:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Հանկարծ վեր կենալով, տաքացած): Լա՛վ, ի՞նչ ես ուզում անեմ: Թողնե՞մ նրան:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Իհա՛րկե, հիմար:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ինչի՞ համար: Չէ՛, մի ասա տեսնեմ՝ ինչի՞ համար:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Որ ասում եմ իդիստ ես: Էլի ասե՞մ, ինչ որ այս րոպեիս ասացի:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ինձ չի հավանում, չէ՞: Լա՛վ: Հապա ինչո՞ւ մատանիս ընդունեց: Չէր ճանաչում ինձ այդ ժամանակ, չէ՞: Լա՛վ: Հիմա խո ճանաչե՞ց.

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Այո՛, ճանաչեց, և տեսար, որ ոչ բերած ապարանջանիդ վրա թքեց, ոչ էլ բոնբոնիերիդ և դեռ քիչ մնաց, որ գիրքն էլ գլխովդ տար:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո, ճիշտ է, նա ոչ ապարանջանին ուշադրություն դարձրեց, ոչ էլ բոնբոնիերին և գիրքն էլ շպրտեց այնտեղ: Բայց խո մատանին դեռ մատի՞ն էր: Հը՞, խո մատին է՞ր: Տեսա՞ր, թե ոչ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ասենք, չեմ նայել, որ տեսնեի...

ՍԻՍԱԿՅԱՆ. Վա, մատին էր: Ի՞նչպես չտեսար, զարմանալի է, Ա՛յ, այս մատին (ցույց է տալիս յուր ձեռքի անանուն մատը):

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Հա՛, լավ, մատին էր, մատին, և ընդունենք, թե տեսա: Հետո՞:

ՍԻՍԱԿՅԱՆ. Ինչո՞ւ չհանեց մատից, չտվեց ինձ ու չասաց. «Պարոն, ահա ձեր մատանին. ետ ընդունեցեք խնդրեմ, որովհետև քննեցի ձեզ և տեսա, որ դուք իդիստ եք»: (Մարգարյանը հանկարծ և ակամա ծիծաղում է խիստ

բարձրաձայն, բայց իսկույն էլ զսպում է իրեն): Բայց նա այդպիսի բան չարեց: Ինչո՞ւ չարեց, հը՞, քեզ եմ հարցնում, ինչո՞ւ չարեց:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. (Նայում է նրան անկեղծ սրտացավությամբ): Վա՛յ, խեղճ Գարեգին, դու ճիշտ որ կատարյալ իդիստ ես եղել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Չէ՛, մի ասա տեսնեմ, ինչո՞ւ չարեց:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Որովհետև խելքը գնում է քեզ համար:

ՍԻՍԱԿՅԱՆ. Չէ՛, մի՛ հեգնիր խնդրեմ և պատասխանիր հարցիս. ինչո՞ւ չարեց:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ես ի՞նչ գիտեմ, հիմար:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Հաղթական): Հա՛, այդտե՛ղ կաց: Չարեց, որովհետև... ոչ ես եմ ճանաչում նրան, ոչ դու: Գուցե ծնողներն էլ չեն ճանաչում, նույնիսկ քո ասած այդ ծեր աղվեսն էլ: Այո՛: Դու նրան կամակոր, կոպիտ, չարահոգի աղջիկ ես համարում, իսկ ես նրա մեջ տեսնում եմ ինքնուրույնություն, անկախության ձգտում, խիզախ, հանդուգն ոգի մի բան, որից զուրկ եմ ես, բայց սաստիկ սիրում եմ: Եվ իզուր ես շտապում ինձ խորհուրդ տալու, որ ձեռք վերցնեմ նրանից: Մինչև որ ինքը չմերժի, ես ձեռք վերցնողը չեմ, չե՛մ ու չե՛մ:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Է՛հ, դու գիտես: Ես իմ պարտքը կատարեցի նախազգուշացրի քեզ. այսուհետև մեղն ու վարձքը քո շլնքին: (Հագնում է վերարկուն):

ՍԻՍԱԿՅԱՆ. (Վախեցած): Դու գնո՞ւմ ես:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Բաս ի՞նչ անեմ: Մնամ, որ նոր կոպտությունների ականատես լինե՞մ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Բայց նա խո քեզ ոչինչ չի՞ ասել:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ա՛յդ էր պակաս, որ ինձ էլ ասեր: Անծանոթ մարդ եմ, հյուր եմ եկել առաջին անգամ, և իմ ներկայությամբ... ո՛չ, ներողություն կանես: Ես քեզ պես փտած ջղեր չունեմ և զուրկ չեմ ինքնասիրությունից: Դու ուզում ես մնալ՝

մնա, իսկ ես չեմ կարող: Բարի գիշեր:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Պահելով նրան): Միքայե՛լ, ի՞նչ ես անում... իսեր աստծո... ի՞նչ կասեն... ես կմեռնեմ ամոթից...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Դու ինչո՞ւ ես մեռնում ամոթից: Թե որ հասկացող են, թող նրանք ամաչեն, որ հյուրը ստիպված է լինում փախչել: Ահա տեսնում ես, մեզ թողել են այստեղ մենակ, և իրենք հեռացել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Լավ, ի՞նչ ասեմ, որ գան:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Ինչ ուզում ես՝ ասա:

ՍԻՍԱԿՅԱՆ. Եվ դու այդ բանն անքաղաքավարություն չե՞ս համարում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Կոպիտ մարդկանց հետ պետք է կոպիտ կերպով վարվել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Կաց, գոնե թեյ խմիր, հետո...

ՄԱՐԳԱՐՅԱՆ. Թեյը դու անուշ արա, թե որ ախորժակ ունես: Բարի գիշեր: (Դուրս է գնում դիմացի դռնից):

Սիսակյանը սաստիկ մտատանջության մեջ ման է գալիս սենյակում, անհամբեր և վախկոտ հայացքներ ձգելով աջ դռան կողմը: Ժպտալով մտնում է Բաղիրյանը:

ՏԵՍԻԼ X

ԲԱՂԻՐՅԱՆ. (Հանկարծ նկատելով Մարգարյանի բացակայությունը, զարմանում է): Ա՞յս ինչ է, դու մենա՞կ ես մնացել: Ո՞ւր է ընկերդ:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Շփոթված): Գնաց...

ԲԱՂԻՐՅԱՆ. Գնա՞ց: Ո՞ւր:

ՍԻՍԱԿՅԱՆ. Գործ ուներ... էլի կգա...

ԲԱՂԻՐՅԱՆ. Հա՛, երևի մոտիկ տեղ գնաց:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո... այստեղ... մոտիկ...

ԲԱՂԻՐՅԱՆ. Թեյն էլ չի խմել:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո... հանկարծ միտն եկավ... շտապում էր...

ԲԱՂԻՐՅԱՆ. Բան չկա: Եկ նստիր: (Հանկարծ): Սպասիր... (կասկածանքով նայում է նրա աչքերին): Չլինի՞ թե վիրավորվեց, որ...

ՍԻՍԱԿՅԱՆ. (Արագ, եռանդով): Չէ՛, ի՞նչ եք ասում, չէ...

ԲԱՂԻՐՅԱՆ. (Զարմացած): Ի՞նչ չէ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Որ ընկերս իբր թե վիրավորվեց, որ Սառան...

ԲԱՂԻՐՅԱՆ. (Ավելի զարմանալով): Ի՞նչ Սառան:

ՍԻՍԱԿՅԱՆ. Որ Սառան... վարվել չգիտե... չարահոգի է... (բոլորովին շփոթվում է):

ԲԱՂԻՐՅԱՆ. Ա՛, ուրեմն... Ա՛յ, տեսնո՞ւմ ես, սիրելիս, դու քո միամտությամբ մատնեցիր թե քեզ և թե՛ բարեկամիդ... (Ծանր և լուրջ): Գիտե՞ս ինչ կա, բարեկամ: Ես շիտակ և ազնիվ մարդ եմ և սիրում եմ ամենքի հետ վարվել շիտակ և ազնիվ կերպով: Իմ աղջիկս ահա այս է, որ տեսնում ես: Նրա բոլոր պակասություններն էլ ես ինքս հայտնեցի քեզ: Հիմա քո բարեկամը կարծում է, թե նա չարահոգի աղջիկ է: Է՛հ, թող կարծի այսպես: Բայց ես քեզ կասեմ, որ այդ այդպես չէ: Երեկ էլ ասացի, այսօր էլ ասում եմ. նա ինքնուրույն աղջիկ է: Նա ուրիշների պես չի կեղծում, չի խարդախում յուր բնավորությունն ուրիշների առաջ, այլ պարզ կերպով, անկեղծորեն ցույց է տալիս այն, ինչ որ է: Հավանում ես առ, չես հավանում, դեռ ևս ուշ չէ, կարող ես նշանդ ետ առնել, և դու քեզ համար, մենք մեզ համար:

ՍԻՍԱԿՅԱՆ. (Լացակումած:) Պարոն Հակոբ, դուք ինձ վիրավորում եք... Մի՞թե ես ձեզ բան ասացի...

ԲԱՂԻՐՅԱՆ. Դե լավ. որ այդպես է, նստիր: Այլևս չխոսենք այս մասին: (Նստում է: Միջոց): Ես այնտեղ երկար խոսեցի Սառայի հետ: Երևակայիր, ներողություն խնդրեց: Թեպետ ինքն ասում է, որ երեխա չէ, բայց իսկապես երեխայի բնավորություն ունի, և դրա համար է, որ ես սաստիկ սիրում եմ նրան: Բանից երևաց, որ նրան նեղացրել են: Դու չէ, ուրիշները... խիստ զգայուն աղջիկ է. մի փոքրիկ, մի աննշան բանից անգամ վառոդի պես պայթում է: Նրա հետ վարվելու կերպը ոչ ոք չի իմանում, բացի ինձանից: Նեղացած ժամանակ ինչքան էլ որ կոպիտ կերպով է վարվում ինձ հետ, այնուամենայնիվ ես չեմ բարկանում նրա վրա, այլ միշտ կատակով, միշտ ծիծաղելով աշխատում եմ... Թեյը սառն է, վերցրու... միշտ կատակով. միշտ ծիծաղով աշխատում եմ բանն անցկացնել: Հիմա, երևակայիր, այնքան խեղճացել է, որ ամաչում է դուրս գալ: Իսկ քո բարեկամը... Ճի՞շտ, նեղացա՞վ: Եվ չի՞ գալ:

ՍԻՍԱԿՅԱՆ. Այո:

ԲԱՂԻՐՅԱՆ Ափսոս: Ես կուզեի նրա հետ խոսել... Ինչևիցե: (Կանչում է): Սոֆիա, Սառա, եկեք, թեյը սառեց: (Սիսակյանին): Այդ բանը չպետք է նրանց ասել:

ՏԵՍԻԼ XI

ՍՈՖԻԱ. (Մտնում է և տեսնելով, որ Մարգարյանը չկա): Ո՞ւրտեղ է պարոնը:

ԲԱՂԻՐՅԱՆ. Պարոն Մարգարյանը ձեռաց գնացել է մի տեղ, շուտով կգա: (Դիմացի դուռը ծեծում են):

ՍՈՖԻԱ. Ա՛յ, երևի նա է: (Բաց է անում դուռը: Շեմքում երևում է Թուսյանը):

ՏԵՍԻԼ XII

ԹՈՒՍՅԱՆ. Ներեցեք: Այստե՞ղ է կենում պարոն Հակոբ Բաղիրյանը:

ԲԱՂԻՐՅԱՆ. (Դնում է պենսնեն և վեր կենում): Ես եմ. ի՞նչ եք կամենում:

ՍՈՖԻԱ. Համեցեք ներս:

ԹՈՒՍՅԱՆ. (Մտնում է): Երկու օր է, ման եմ գալիս ձեզ, հազիվ գտա: Ես գալիս եմ Պետերբուրգից: Այնտեղ դուք մի ազգական ունեք երաժշտական դպրոցի ուսանող...

ԲԱՂԻՐՅԱՆ. Երաժշտական դպրոցի ուսանո՞ղ:

ԹՈՒՍՅԱՆ. Խոսրոյան Վարդգես ազգանունով:

ԲԱՂԻՐՅԱՆ. (Հանկարծ): Հա՛, հա՛, քրոջս տղան... ի՞նչ կա:

ԹՈՒՍՅԱՆ. Մի նամակ տվեց ինձ ձեզ հանձնելու, որովհետև թեև գիտեր, որ դուք այժմ Թիֆլիսումն եք, բայց ձեր հասցեն չգիտեր և բացի դրանից, խնդրեց, որ անձամբ խոսեմ ձեզ հետ: Ահավասիկ: (Տալիս է նամակը):

ԲԱՂԻՐԱՆ. Ա՜, այդ փուշը վերջապես լո՞ւյս ընկավ... Սպասեցեք, նա այժմ երաժշտական դպրոցի ուսանո՞ղ է:

ԹՈՒՍՅԱՆ. Այո, զինվորական-բժշկական ակադեմիայից հեռացավ և այժմ ուզում է արտիստ դառնալ.

ԲԱՂԻՐՅԱՆ. Հեռացավ, հա՞, և ոչ վոնդեցին: Եվ այժմ էլ ուզում է արտիստ դառնալ, հա՞... լա՛վ: Իսկ այն փողերը... հատել են, չէ՞... Հասկացանք փորի ցավը... դեռ մեկ տեսնենք ինչ է գրում: (Պատռում է ծրարը և սկսում լուռ կարդալ):

ՍՈՖԻԱ (Թուսյանին): Նստեցե՛ք խնդրեմ:

ԹՈՒՍՅԱՆ. Շնորհակալ եմ: (Նստում է դռան մոտ, աթոռի վրա):

Կարճ միջոց անցնելուց հետո մտնում է Սառան և Թուսյանին տեսնելուն պես կանգ է առնում կարծես շանթահար: Թուսյանը ցնցվում է, վեր է թռչում և տեղն ու տեղը արձանանում ինչ-որ խիստ անակնկալից: Մի րոպե նրանց հայացքները

մեխվում էն իրար: Հանկարծ Սառան ճչում է և դուրս փախչում հարևան սենյակը: Սաստիկ իրարանցում: Բաղիրյանը, Սոֆիան և Սիսակյանը «Ի՞նչ, ի՞նչ պատահեց» ասելով, սաստիկ վախեցած, վազում են Սառայի ետևից: Թուսյանն ուշքի է գալիս և շտապով դուրս գնում:

(Վարագույրն իջնում է)